

յարձակմամբը թշնամին այնպես մը վկանդուած էր, որ միջնամարտիկ գունդին նոր յարձակման տեղի չկար ամենեւին:

Շատ աւելի անըմբռնելի կը մնայ ինձ Ռայնխտի¹ վարկածը, որ ուղղակի միջնամարտ գունդին կու տայ զՄիհրդատ ի փախուստ դարձնելու պատիւը: Մեզի ծանօթ աղբիւրներէն ոչ մէկուն քով սակայն ամենագոյն յիշատակութեան միակ կը հանդիպինք Միհրդատի կողմէ եղած ոեւէ շարժումի մը, որուն դէմ միջնամարտ գունդը գործածել հարկ եղած ըլլար: Իսկ եթէ Պլուտարքոսի վկայութեանը վրայ բացարձակապէս կառչած՝ հաստատ մնալ կ'ուզուի այն ենթադրութեան վրայ, որուն համաձայն, իբր թէ Միհրդատ հռոմէական հետեւակազորուն յարձակմանը դիմանալ չկարենալով փախուստ տուած ըլլայ, այդ պարագային ոչինչ ընդդէմ է կարծեմ նոյնքան իրաւամբ նաեւ ենթադրել, թէ Միհրդատ ուղղակի նախամարտիկ գունդին առջեւէն փախած ըլլայ: Ռայնխտի կազմած ռազմավարական ծրագրին համաձայն՝ ուղած կ'ըլլայ Միհրդատ թիկունքէն Հռոմայեցւոց վրայ իյնալ. գործողութիւն մը, որ, ըստ ինքեան, շատ ալ օգտակար կրնար եղած ըլլալ. ափսոս սակայն, որ այդպիսի ենթադրութիւն մը արդարացրնող ոեւէ պատճառ գոյութիւն չունի, նա թէ Արածանիով իսկ Հռոմայեցւոց թիկունքն ըստ բաւականի լաւ պաշտպանուած էր:

Ես, իմ մասին, շատ աւելի կը միտիմ կարծել, թէ Միհրդատ հոս եւս՝ ինչպէս Տիգրանակերտի քով, երբեք պատերազմակից եղած չէր Տիգրանի, եւ թէ նա՝ ինչպէս յառաջ, նմանապէս եւ այժմ, հայկական ուժերուն երկրորդ կիսաբաժնին — որուն կորիզը կը կազմէր բովանդակ հետեւակազորը — ընդհանուր հրամանատարն էր: Արդ, Լուկուլլոսի չուին նպատակն իմացուելով երբ Տիգրան իւր ձիաւորներով զայն հետապնդելու ելաւ, եւ ի վերջոյ Արածանէոյ ձախակողմն անոր դէմ ճակատեցաւ, ապահովաբար Միհրդատ եւս իւր զօրաբանակովն անոր հետեւած ըլլալու էր: Արդ, շատ հաւանական է որ մինչեւ վերջնոյս ռազմագաշտ հասնին՝ որոշեչ ճակատն արդէն մղուած վերջացած ըլլար, եւ, այս պատճառաւ, Միհրդատ ուղած չըլլար իւր հետեւակազորն անօգուտ յարձակման մը մղել, ալ զայն ապագային աւելի աղդեցիկ կերպով գործածելու նպատակաւ՝ առանց պատերազմելու, հեռացած ըլլար ռազմաճակա-

տին քովերէն: Այս հաւանական միջադէպն անշուշտ առիթ տուած կրնար ըլլալ Լիւիոսի ծանօթ քննադատութեան, որով կը դարձնէր նա զՄիհրդատ թէ “տոկալ չկարենալով հռոմայեցի զօրաց աղաղակներուն” փախած է ռազմագաշտէն: Գուցէ թէ Մոմսէն եւս իւր վերոյիշեալ խօսքերովն այսպիսի կամ նման կարծիք մը յայտնել ուղած ըլլար. այդ պարագային սակայն, պէտք չէր անհատական կարծիք մը՝ իբր հաստատուն իրողութիւն մը վճռականօրէն ներկայացընել: Այս բոլորն, ի հարկէ, ենթադրութիւններ են լոկ, որոնց ստիպուած ենք մենք դիմել մեր աղբիւրներուն անբաւականութեան եւ որոշ տեղեկութեանց չգոյութեան պատճառաւ:

(Շարունակելի:)

Հ. Գ. ԳԱՐԱՆՓՈԼԵԱՆ



ՀՈԼԼԱՆՔԱՆ ԵՒ ՀԱՅԵՐԸ

ԺԶ - ԺԹ. ԳԱՐԵՐՈՒՄ

(Շարունակութիւն:)

Դ.

Շահին Կանդի Հալէպցի հայ լեզուագէտը Լէյդէնում: Բոբովսկի-Ալի Բէյի՝ Աստուածաշունչի թրքերէն թարգմանութիւնը: Շահինի քննութիւնն ու եզրակացութիւնը դրա մասին: Բոբովսկու ձեռագիրն Ամստերդամում: Լէյդէնի պրոֆէսորներ Գոլիոսի եւ Պետրէուսի կարծիքները Շահինի մասին: Շահինի վիճակը:

Այն ժամանակ երբ Ամստերդամում Աստուածաշունչի հայերէն հրատարակութեամբն էին զբաղուած, մերձակայ Leyde կամ այժմ Leiden քաղաքում¹, մի ուրիշ ուսումնական հայ աշխատում էր թրքերէն Աստուածաշունչի վրայ Այս հայը կոչվում էր Շահին Կանդի (Shahin Kandi), որ ծննդեամբ հալէպցի էր, ուրեմն Սի-

¹ Լէյդէն քաղաքը վաղուց համբաւուր էր իր գիտական հաստատութիւններով եւ այդ պատճառով “Ջիւսիսային Աթէնքէր” փառաւոր կոչուին էր վայելում: Դժանաւոր են այժմ էլ՝ համալսարանը, Աղգաբարական թանգարանն եւ Ս. Պետրոս եկեղեցին, ինչպէս նաեւ Քաղաքային Տունն իր հազուագիւտ արեւելեան գորգերով:

¹ Անդ. էջ 164 եւ 165:



րեացի: Սա՝ Լէյդէնի համալսարանի մատենադարանում արաբերէն, պարսկերէն եւ թրքերէն ձեռագիրների վրայ հսկող ու օրինակող էր եւ միանգամայն այդ լեզուների թարգման:

Laurens de Geer ուսումնասէր ու հարուստ հոլանդացի, որ Լէյդէնի համալսարանի խնամակալն էր, որոշում է թուրք ժողովրդի մէջ քրիստոնէութիւն տարածել եւ այս նպատակով Աստուածաշունչն ամբողջապէս այսինքն թէ հին եւ թէ նոր կտակարանները թրքերէնի թարգմանել տալ: Նա դիմել է Լոնդոն, Կ. Պոլիս եւ Լէյդէն, ուր որ յոյս է ունեցել հմուտ թարգմանիչներ գտնելու: Նրա յանձնարարութիւնն ընդունել եւ կատարել է Կ. Պոլսում Albertus Bobovius կամ Bobovski անունով մի լեհացի, որ մահմետականութիւն ընդունելով, անունը վերածել է Ալի Բէյի եւ սուլթան Մուհամմէդ Գ-ի Ա. թարգմանն է դարձել: Լաւրէնս՝ Բոբովսկու կատարած թարգմանութիւնն ուղարկել է Լէյդէնի համալսարան, որպէս զի քննեն այնտեղ թէ որչափ ճիշդ է կատարուած: Համալսարանն էլ այդ գործը յանձնում է Շահինին, իբրեւ մասնագէտի: Շահէն երկարօրէն զբաղվում է այդ թարգմանութեամբ եւ եզրակացնում է թէ նա անյաջող է, մէջը խոշոր սխալներ կան, թրքերէնը խորթ է, օտարօտի բառերով լի: Որպէս զի իր քննութիւնը եւ եզրակացութիւնը շօշափելի կերպով ապացուցանէ, համալսարանի առաջարկութեամբ ինքն է թարգմանում թրքերէն լեզուով Աստուածաշունչից մի քանի գլուխ, համեմատութեան մէջ դնելու համար: Համալսարանը՝ յանձին նրա Պրոֆէսոր Գոլիուսի (Golius¹ կամ Gool), մեծապէս հաւանում է Շահինի կատարած թարգմանութիւնն եւ 1666 Ապրիլ 5 թուականով հետեւեալ նամակն է ուղղում Laurensին, որը մենք յառաջ ենք բերում ամբողջովին, թարգմանօրէն.

«Ընդ սմին ուղարկում եմ երկու թարգմանութիւն, որ Հայն է կատարած, փորձի համար, մէկը ամբողջ թերթի վրայ, միւսը կէս թերթի համար: Եթէ Գուբ կը նախընտրէք, որ թարգմանութիւնը գրուի ամբողջ թերթի վրայ

եւ տողերը միմեանցից չբաժնուին այդպէս էլ կարելի է անել: Boboviusի թարգմանութիւնը քննեցի եւ շատ թերութիւններ գտայ մէջը, ոչ միայն թրքերէնի ոճի տեսակետից այլ եւ իբր սխալ թարգմանութիւն: Մի քանի տեղ Ս. Գրքի իմաստը չէ հասկացել. տեղ տեղ բոլորովին մոռացել է թարգմանել. տեղ տեղ էլ լատիներէնից եւ յունարէնից առնուած բառեր է մուծել, որոնք բոլորովին անծանօթ են թրքերէնում: Չգիտեմ ի՞նչ բնագիր է ունեցել թարգմանիչն իր աչքի առջեւ, ուստի գրեցի նրան, որ յայտնէ թէ որ լեզուից է թարգմանուած, որպէս զի ըստ այնմ կարելի լինի համեմատել, որով սրբագրելն էլ աւելի հեշտ է»:

«Ինչ թուում է թէ Հայը, որի թարգմանութիւնը ձեռքիս տակն է, կարող էր շատ յաջող կերպով այս ամբողջ աշխատանքը կատարել: Նա նոյն իսկ կարող է աւելի դիւրութեամբ նորից թարգմանել արաբերէն ընագրից, որ վաղուց գործածութեան մէջ է Արեւելքում, քան թէ Բոբովսկու այս թարգմանութիւնը սրբագրել եւ թրքերէնի դարձնել: ... Ես կարծում եմ թէ նոր թարգմանութիւնն աւելի ծախք չի պահանջի, քան թէ եղածը սրբագրելը: Թէեւ չեմ կարող ուրիշ աշխատանքը գնահատել, բայց որովհետեւ ես ինքս վճարում եմ ֆլորին 0.80 ամէն մի թերթին, որ բաղկացած է 4 էջից, իւրաքանչիւրը 21 տողից, հետեւաբար այս պատուական մարդը (Շահին), որ ստիպուած է քննել, ուղղել եւ օրինակել, անշուշտ 25—30 սէնտ աւելի պէտք է որ վարձատրուի: Եւ քանի որ ամբողջ թարգմանութիւնը հարկ է փոխել արաբական բնագրին յարմարցնելու համար ուստի արդարութիւնը պահանջում է, որ նրան վճարուի թերթին ֆլ. 1.25: Ինչ վերաբերում է այն թրքերէն թարգմանութեան, որ կատարուած է Անգլիայում¹, Զէման (կամ Սիման) անունով անգլիացու ձեռքով եւ տպուած է Անգլիայում, որից էլ 2 թերթ ուղարկել էին ինձ, Հայը այս էլ քննեց եւ գտաւ որ այս թարգմանութիւնն էլ յաջող չէ, որովհետեւ բացի

¹ Այս հոլանդացի ուսումնականը նշանաւոր արեւելագէտ էր, հմուտ՝ արաբերէնի եւ թրքերէնի (ծն. 1596, վրձ. 1647): Նա ճանապարհորդած է Մերձաւոր Արեւելքում եւ մէկ տարի էլ Կ. Պոլիս է մնացած, հոլ. գեագան Հադալի մոտ: Նա ունի լեզուագիտական հեղինակութիւններ, ի մէջ այլոց արաբ-լատին բառգիրք, որ տպուած է 1653ին Ամստերդամում (Jacobii Golii, Lexicon Arabico-Latinum contextum ex probatioribus orientis Lexicographis եւ այլն):

¹ Novum Testamentum graece et Turcice, versum per Gul. Seaman, Oxon. 1666, 4^o (Catal. impr. in Bibliotheca Bodleiana, Oxonii 1738, II, 577).

Այս միեւնոյն թարգմանութեան մասին մի հետաքրքրական նամակ կայ լատիներէն լեզուով, նոյն Laurens de Geerին ուղղուած. նամակագիրն է J. C.: Այս տառերի տակ ծածկուած է Johan Comenius, աստուածաբանն եւ մանկավարժը, որ վրձ. Ամստերդամում 1670ին, բայց սակայ չունի մեր Պատմութեան հետ, ուստի աւելորդ ենք համարում մէջ բերել:

նրանից, որ գրուածքը դժուարութեամբ է կարգացվում, լեզուն շատ տեղ անհասկանալի է, ոճը բռնազբօսիկ եւ խորթ: Հայր ինձ հետ միասին Պաւղոս Առաքեալի առ Տիմոթէոս թղթին 57 գլխի առաջին 5 տողերը քննելուց եւ համեմատելուց յետոյ նորից թարգմանեց այդ թըրքական լեզուի ոգւով ըստ կարելոյն պահպանելով բնագրի ոճը: Նրա այս թարգմանութիւնն այնչափ ընտիր է, որ մեծ հաճոյք պիտի պատճառէ հմուտ ընթերցողին...»:

Նամակի շարունակութեան մէջ Golius խօսում է երկարօրէն թէ որչափ աստուածահաճոյ կարեւոր գործ է, որ Աստուծոյ խօսքը հասկանալի եւ ընտիր թըրքերէն լեզուով թարգմանուելով տարածուի մահմետական թուրք ժողովրդի մէջ¹:

Ինչ հետեւանք է ունեցած Գոլիուսի այս գրագրութիւնը յայտնի չէ, բայց Բոքովսկու բուն ձեռագիր թարգմանութիւնը այժմ գտնվում է Ամստերդամի համալսարանի Մատենադարանում եւ պահվում է մեծ խնամքով ամուր փայտէ տուփի մէջ: Մենք առիթ ունեցանք քննելու այնտեղ այդ ձեռագիրը պարզապէս հետաքրքրութեան համար եւ միայն թըրքերէն լեզուի հարազատութեան տեսակէտից, ի նկատի ունենալով, որ դրա մասին էր քննադատների գլխաւոր դժգոհութիւնը: Իրօք շատ բառեր կան այնտեղ որոնք ոչ մի նմանութիւն չունին թըրքերէնի, գոնէ Կ. Պոլսի այժմեան գրական լեզուի. դարձուածները, բացատրութեան ձեւերն եւ առհասարակ ոճը — խորթ են, անհարթ եւ շատ տեղ անհասկանալի: Բայց դրա փոխարէն ձեռագրի արտաքին տպաւորութիւնը շատ նպաստաւոր է, գիրը շատ գեղեցիկ, կոկիկ եւ դիւրաւ ընթերցելի: Հետաքրքրական է այնտեղ նաեւ հետեւեալը. լուսանքներում, տեղ տեղ, կան կարմիր թանաքով գրուած լուսաբանութիւններ եւ նոր թարգմանութիւնն այս կամ այն պարբերութեան: Ուր որ այսպիսի երկրորդ թարգմանութիւն է ղեկեղուած, առաջինի, այն է բնագրին տակ կարմիր գիծ է քաշուած, համեմատութիւնը դիւրացնելու համար: Այս նոր թարգմանութիւններն աւելի հարազատ են, այսինքն թըրքերէն լեզուի կողմից աւելի հասկանալի եւ աւելի մաքուր ոճով: Շատ հաւանական է, որ Շահինն է

կատարած այդ, ապացուցանելու համար Բոքովսկու գրութեան անյաջող լինելը, բայց ձեռագրում ոչ մի տեղ այս մասին որոշ յիշատակութեան չհանդիպեցանք:

Ինչպէս երեւում է Լէյդէնի համալսարանի արեւելագէտները վաղուց են զբաղուել Աստուածաշունչի թըրքերէն թարգմանութեամբ, որովհետեւ այդ թուականից էլ յառաջ, այն է 1662ին դարձեալ գրագրութիւն կայ այդ մասին, այս անգամ ոչ թէ լատիներէն կամ հոլլանդերէն լեզուներով այլ գերմաներէն: Ուսուցչապետ Petrejus¹ 1662 Գեկտեմբեր 24 թուով գրում է Կ. Պոլսի հոլլանդական դեսպան Levinus Warner ին², այդ խնդրի առթիւ եւ յիշում է թէ Լէյդէնի համալսարանում կայ մի արար, որ շատ լաւ հմուտ է արաբերէն, պարսկերէն, թըրքերէն, իտալերէն եւ հայերէն լեզուներին, որի աջակցութեան ինքն անհրաժեշտ է համարում դիմել թըրքերէն թարգմանութիւնը քննելու, համեմատելու եւ ուղղելու համար: Այս արարը միեւնոյն Շահին կանգին է, որին նամակագիրը պարզապէս արար է անուանում իր երկրի (արաբական Սիւրիա) վրայ հիմնուելով, ինչպէս Նոր-Ջուղայեցի հայերին՝ Հոլլանդայում երբեմն պարսիկ էին համարում պաշտօնապէս՝ իրենց Պարսկաստանցի լինելու պատճառով:

Շահին Լէյդէնում, վերջին տարիները շատ կարօտութեան մէջ է մնացել: Այս երեւում է նրա՝ Պրոֆ. Գոլիուսին գրած մի նամակից, որտեղ նա գանգատվում է թէ ոչ ինքը Գոլիուս եւ ոչ միւս արեւելագէտ ուսուցչապետը Պետրէուս եւ ոչ էլ մի այլ պաշտօնական անձ, նրան չեն օգնում իր նիւթական նեղ գրութեան մէջ: Այստեղ Շահին պատմում է թէ «իր հայ բարեկամները» տեսնելով նրա վիճակը, Իտալիա ուղեւորուելու ժամանակ առաջարկել են նրան, որ գնայ իրենց հետ, խոստանալով որ կը հոգան նրա բոլոր ծախքերը, բայց ինքը չէ ուղեկցել, իսկ այժմ զղջում է, որովհետեւ, ասում է նա, շնորհիւ այդ հայ բարեկամների կարող էր այնտեղ, Իտալիայում «հազար տեսակ գործ գտնել, ուր որ այստեղ նրա մասին այլ եւս հոգացող չկայ» եւ նա բացատրում է այս՝ հետեւեալ պարսկերէն առածով. «երբ ջուրը երկար ժամանակ անշարժ մնայ, կը հոսի»...:

¹ De Bockhandel te Amsterdam, voor namelijk in de 17^e Eeuw, door M. M. Kleerkooper, aangevuld en uitgegeven door W. P. Van Stockum, 's Gravenhage 1914. (Գրավաճառութիւնը Ամստերդամում, ԺԷ. դարում, տպ. Հաագում 1914, էջ 1242:)

¹ Այս գիտնականի մասին (նաեւ Petraeus ձեւով) տես C. G. Jöcher, Allg. Gelehrten-Lexicon, III, 1751, S. 1439.

² Levini Warneri De rebus Turcicis, epistolae ineditae. Lugd. Bat. 1883, 8^o.

Հասինի գրութիւնները հրատարակող հոլանդացին՝ M. Houtsma՝ իր արած դիտողութիւնների եւ տուած բացատրութիւնների մէջ, մեծ գովասանքով է խօսում նրա մասին .

“Հասինի նամակները, ասում է նա, լիքն էին պարսկերէն առանձներով . մի անգամ էլ յառաջ է բերած թրքերէն մի առանձն, բայց Շահին իր նամակները միշտ արաբերէն էր գրում . . . : Սա գիտէր նաեւ հայերէն” : “Առհասարակ նա շատ խելացի եւ հմուտ արեւելքի էր” :

“Պրոֆ. Գոլիուսի աշխատակիցների մէջ Հասին լաւագոյն արաբերէն գրողն էր, ի բաց առեալ բնականաբար Մոհամէդ-ալ-Հուսթիւսին : Պարսկերէն յիշատակութիւնները ցոյց են տալիս Հասինի սրամիտ եւ միանգամայն զարգացած մարդ լինելը : Նրա արաբերէն գրութիւնները արժանի են արաբական Հատընտիր Ընթերցութեան (Christomatie) մէջ դրուելու . . .” :

“1669 Մայիս 31ից յետոյ ոչ մի տեղեկութիւն չկայ Հասինի մասին . մեռա՞ւ նա թէ Հոլանդայից հեռացաւ, յայտնի չէ . հաւանական է որ նա մեկնած լինի Արեւելք, իր հայրենիք” :

Houtsma վերջացնում է հետեւեալ դառն տողերով իր հայրենակիցների հասցէին .

“Մեր երկրում Հասին Վանդիի համար այլ եւս գործ չկար, որովհետեւ Գոլիուսի մահից յետոյ արաբերէնի ուսուցչի պէտք չէին զգում : Մեր հայրերը Արեւելքի հետ առուտուր անելով մեծ հարստութիւն էին դիզել . նրանց որդիքը այդ հարստութիւնը վայելում էին, առանց որ եւ է ծախք կամ զոհողութիւն յանձն առնելու : Հատստանալ եւ քիչ տալ՝ անգլիացի եւ հոլանդացի վաճառականների համար սկզբունք էր դարձել, որի տխուր հետեւանքը նրանք շուտով պիտի զգային¹” :

(Շարտահանկեր) :

ՄԱՐՈՒՆԻՍ



ԽՈՒՍՏՈՒՄ ԱՐՈՎԵՆՆԻ ԳԵՐԵՉՄԵՆԸ ԱԽՈՍՏԿՈՒՄ*

Անցեալ 1925 թուին երբ որպէս Նուիրակ Ս. Էջմիածնի այցելում էի Հեռաւոր Արեւելքի Հայ համայնքներին՝ Մանչուրիայի Սարբին քաղաքում հանդիպեցի կովկասահայ Սարգիս Գրծիլեանին, որը Հեռաւոր Արեւելքի Հայ համայնքների կենդրոնական անձն է, որին դիմում են բոլորը իրենց կարիքների համար եւ կապ պահպանում իրենց ամբողջ կեանքի ընթացքում :

Նա ինձ տալով Հեռաւոր Արեւելքի եւ Սիրիայի Հայութեան ճշգրիտ պատկերը պատմեց նաեւ Սալաուտուր Արուսեանի գերեզմանի մասին հետեւեալը, որը գրի առայ բառացի նրա ասածով :

«Երբ ես առաջին անգամ ծովային ճանապարհով եկայ Վլատիլաստոկ, այն տեղ կային մի քանի աքսորուած հայեր, այնտեղ էր նաեւ լուսանկարիչ Բուդաղեան, եւս մի ուրիշ լուսանկարիչ Յովհաննէս անուանով :

Այս Յովհաննէսը նամակով ծանօթացրեց ինձ, Սախալինում աքսորուած Կուկուսեանի խմբից Ռուբէն Դերձակեանի հետ . նոյն ձեւով էլ ծանօթացայ քաղաքական աքսորեալ Թիֆլիսեցի Մանուկարեանի հետ, որը իր մահուան վերջին տարիներում Բլազավելչինսկ քաղաքում հրատարակում էր ուսերէն լեզուով լրագիր : Սրանց հետ ես ունեցայ նամակագրութիւն :

Մի օր ինձ մօտ եկաւ մի անծանօթ մարդկարձ հասակով ու հարցրեց հայերէն՝ Սարգիս Գրծիլեանը դո՞ւ ես, զնանք սենեակ, մի քանի խօսք ունիմ ասելու . մտանք սենեակ եւ յայտնեց որ ինքը Կուկուսեանի խմբիցն է, անունը Մերուն, յանձնեց ինձ մի կապոց, որի մէջ կար նաեւ 300—400 ուրլի դրամ եւ ասաց, թէ ինձ հետեւում է կառավարութիւնը, եթէ ինձ բռնեն թող այս դրամը եւ իրերը միայ քեզ մօտ պահ, եւ յայտնեց կը գայ Երեկոյեան ինձ մօտ, երբ մութը կ'ընկնի : Եկաւ Երեկոյեան բեխերը խուզած եւ այնպէս փոխուած, որ ես կարծեցի յապտնացի է :

Երեկոյեան պատմեց, որ ինքը Կուկուսեանի խմբի հետ աքսորուած է Սախալին, որ ինքը գիտէ լուսանկարչութիւն, որ

¹ “Uit de oostersche correspondentie van Erpenius, Jac. Golius en L. Warner . . . Door M. Th. Houtsma, Amsterdam 1887, in 4^o, էջ 69—74.

* Նր հրատարակներ վերապահութեամբ : Անարկուած շրջիմը ընայ թեթեւ Գէորգ Սրովեանի, որ աքսորուած էր ի Սիբիրիա անցած Սարու երկրորդ կէսին : Նոյնազր. “Հանդ. Ամս.” :